# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2026 թվականի N 388 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱ-ԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 1820-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 24-ի «Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշման ընդունման, այդպիսի որոշման մեջ փոփոխություններ կատարելու, դրա գործողության դադարեցման կարգը և ժամկետները, ինչպես նաև ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշման, այդպիսի որոշման մեջ փոփոխություններ կատարելու և դրա գործողությունը դադարեցնելու որոշումների, ինչպես նաև նշված որոշումների ընդունման համար մաքսային մարմիններ ներկայացվող դիմումների ձևերը սահմանելու մասին» N 1820-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Սույն որոշմամբ սահմանված դիմումը և փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացվում են, ինչպես նաև մաքսային մարմինների կողմից սույն որոշմամբ նախատեսված որոշումները կայացվում և դիմումատուին են ուղարկվում մաքսային մարմինների միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի միջոցով, իսկ մինչև նշված համակարգում համապատասխան փոփոխությունների գործարկումը՝ էլեկտրոնային կամ թղթային եղանակով։».

2) որոշման N 1 հավելվածի 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) որոշման N 1 հավելվածի 30-րդ կետը «15 աշխատանքային օրվա ընթացքում» բառերից հետո լրացնել «՝ սույն որոշման N 2 հավելվածի N 8 ձևին համապատասխան» բառերով.

4) որոշման N 1 հավելվածի 31-րդ կետը «որոշման ընդունումը» բառերից հետո լրացնել «՝ սույն որոշման N 2 հավելվածի N 9 ձևին համապատասխան» բառերով.

5) որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին պարբերությունը «մաքսային մարմինների կողմից ընդունվում է» բառերից հետո լրացնել «սույն որոշման N 2 հավելվածի N 10 ձևին համապատասխան» բառերով.

6) որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 36-րդ կետով.

«36. Մաքսային մարմինների կողմից ընդունված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում տեղափոխվող ապրանքի՝ դասակարգման վերաբերյալ որոշում ընդունելու համար ներկայացվող դիմումի քննարկումը մերժելու մասին, դասակարգման վերաբերյալ որոշման ընդունումը մերժելու մասին, դասակարգման վերաբերյալ, դասակարգման վերաբերյալ որոշման մեջ փոփոխություններ իրականացնելու մասին, դասակարգման վերաբերյալ որոշման գործողությունը դադարեցնելու մասին որոշումները կարող են բողոքարկվել մաքսային մարմնի բողոքարկման հանձնաժողով կամ դատարան՝ «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան։».

7) որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ մաքսային մարմինների միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգի փոփոխությունները գործարկվում են մինչև 2028 թվականի դեկտեմբերի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ